ՀՈՒՇԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ԵՎ «ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲՅԱՆԸ ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ» ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԸ

Հ. Գ. ՂԱՋՈՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
Գավառի պետական համալսարանի հումանիտար
մասնագիտությունների ֆակուլտետի դեկան

Հազվադեպ է բնությունը նույն մարդուն օժտում բացառիկ հիշողությամբ, հուշեր պատմելու մեծ ձիրքով և հուշի հանդեպ առանձնահատուկ վերաբերմունքով: Հրանտ Հակոբյանն այն բացառիկ անհատներից էր, ով հուշերով դաստիարակում էր երիտասարդներին, վառ պահում անցյալը, դրանով շաղկապում սերունդներին, կենդանացնում անցյալի դեպքերն ու իրադարձությունները՝ իր շրջապատի մարդկանց համար դառնալով հուշերի անսպառ աղբյուր: Հրանտ Հակոբյանը փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր էր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի, աշխատել է որպես Երևանի պետական համալսարանի կրոնի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտորն էր: Նրա գիտատեսական ժառանգությունը ուսումնասիրելով և պրակտիկ գործունեությանը ականատես լինելով՝ հանգել ենք այն հետևությանը, որ հուշը նրա համար անհրաժեշտ պատվանդան էր՝ ներկայի առանցքում արժեքներ զետեղելու համար: Նա վարպետորեն էր կիրառում հեգելյան փիլիսոփայության հետևյալ սկզբունքը. ‹‹Չկա բացարձակ հին, չկա բացարձակ նոր, նորը լավ մոռացված հինն է››: Իսկ եթե սրան էլ ավելացնենք ‹‹պատմությունը կրկնվելու հատկություն ունի›› մոտեցումը, ապա հուշի կարևորությունն ակնառու կդառնա: Հրանտ Հակոբյանի համար հուշը՝ որպես սերունդների կապի ու սոցիալական փորձի անխզելիության երաշխիք, արժեքները մոռացումից փրկելու և պատմության շարունակականությունն ապահովող միջոց, ուներ սկզբունքային նշանակություն: Նա վստահ էր, որ հուշի ճանաչողական արժեքը ժամանակի ընթացքում և հետահայաց մեծանում է: Կյանքի փորձով իմաստնացած Հր. Հակոբյանը լավ գիտեր, որ հիշողությունը սովորաբար պահպանում է նաև այնպիսի տեղեկատվություն, որը պետական պաշտոնական փաստաթղթերում արձանագրված չէ, դրանց մասին որոշումներ չեն կայացվել, իսկ եթե կայացվել են, ապա միակողմանի,

ոչ լիարժեք, պատեհապաշտության թելադրանքով, խմբագրվել ու ներկայացվել են հանրությանը ժամանակի գաղափարական, քաղաքական ու սոցիալական դիտանկյունից, ուստի և էականը, խորքայինը մնացել է չբացահայտված: Հակոբյանական վերհուշը այդ բացերը, չասվածը, չարձանագրվածը լրացնելու միտվածություն ուներ:

Մեծ է Հրանտ Հակոբյանի վաստակը գիտական, մանկավարժական աշխատանքի ոլորտում, սակայն Հր. Հակոբյանի կյանքի գործը Գեղարքունյաց աշխարհում համալսարան հիմնելն էր, աճող սերնդի կրթության ու դաստիարակության, տարածաշրջանում մտավորականությանը համախմբելու, նրանց արժանի զբաղվածություն ապահովելու առաքելությունը ստանձնելը:

Հր.Հակոբյանի երկրային կյանքից հետո լույս տեսավ «Հրանտ Հակոբյանը հավերժի ճամփորդ» հուշապատումը, քանզի հուշը ճեղքում է լռությունը, հիշողությունը մոռացումից փրկում է այն ամենը, ինչը թանկ է ու արժեքավոր: «Հրանտ Հակոբյանը հավերժի ճամփորդ» հուշապատումը, «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գիրքը, ԳՊՀ բակում կանգնեցված կիսանդրին ճեղքում են լռությունը ժամանակի և տարածության մեջ՝ Հրանտ Հակոբյան մարդ-քաղաքացու կատարած գործի մասին պատկերացումները ամբողջացնելու, մտավորականի, գիտնականի ու մանկավարժի կերպարին հաղորդ լինելու համար: Ասվածին համահունչ է գրքի առաջաբանում դստեր՝ Հրանուշ Հակոբյանի դիտարկումը. «Հրանտ Հակոբյանն իր ողջ կյանքն ապրեց արիստոտելյան առաքինության որակներով՝ արդարությամբ, իմաստնությամբ, ողջախոհությամբ, չափավորությամբ, արիությամբ, ոգու անսպառ ուժով»[1]:

Հուշապատումը ներառում է գրեթե մեկ դար, ներկայացված է ժամանակը գործողության մեջ՝ շնորհիվ Հր. Հակոբյանի մասին հուշեր պատմող անձանց, ովքեր անմիջապես շփվել են, աշխատել նրա հետ, աշակերտել նրան: Հուշեր պատմում են Հր.Հակոբյանի մտերիմները՝ ակադեմիկոսներ, ուսանողներ, հայրենակիցներ, ամենատարբեր զբաղմունքի և հետաքրքրությունների տեր մարդիկ: Նրանց բոլորի համար Հրանտ Հակոբյանը թանկ է ու սիրելի, ուստի և թանկ են նրա մասին հուշերը: Ոմանք պատմում են իրական դեպքեր, ոմանք պարզապես վերհիշում են նրա

[1].Տե՛ս Հրանտ Հակոբյանը հավերժի ճամփորդ, Երևան, «Գիր», 2014, էջ 5:

պատմածները և այդ առնչությամբ որոշ դեպքեր հավելում: Եվ այսպես անցյալի ու ներկայի կապը շարունակվում է շնորհիվ նաև Հրանտ Հակոբյանի: Ստացվում է ինքնատիպ դիալեկտիկական կապ. հիշողության կրողը՝ սուբյեկտը, դառնում է մեկ այլ անձի հիշողության օբյեկտ: Այս առումով ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը դիպուկ է բնորոշել. «Հրանտ Հակոբյանն արժանի է հիշվելու, և նրա գործընկերները, հարազատները և ուսանողները, բոլոր համալսարանականները նրա հիշատակը վառ կպահեն իրենց սրտերում»[1]:

Մարդկային էակների համար անցյալը ապրած կյանքի ժամանակահատված է, որը մնում է հիշողության մեջ: Այս առումով սոցիալական հանրույթի անդամ լինելու համար ներկային հավասարազոր է քո տեղն ունենալ անցյալում, այնտեղ նույնպես ‹‹տեղավորված›› լինել, եթե իհարկե չես մերժում այն: Այդ պատճառով անցյալը մարդկային գիտակցության մշտական չափումներից է, մարդկային հասարակության ամբարած արժեքների և սոցիալական ենթահամակարգերի անօտարելի բաղադրիչներից կարևորագույնը: Անցյալը Հրանտ Հակոբյանի մոտ այնպիսի պատշաճ արժևորում է ստացել և այնպես գիտակցվել, որ այն չնկատել, չգնահատել ու չներկայացնել անհնար է: Հիշողության միջոցով անցյալը վերակենդանացնելու բազում ձևեր կային Հակոբյանի զինանոցում. իրեր, երևույթներ, դեպքեր, եղելություններ, կոնկրետ անձինք: Նրա մոտ անցյալն ամեն ինչում ու ամենուր ապրում էր՝ պայմանով, որ ծառայի ներկային ու ապագային, ուստի հուշը՝ որպես անցյալ, նրա մոտ միօրինակ, ‹‹սառը›› գործընթաց չէր, այլ դեպքերի, երևույթների որոնման, պատճառների հայտնաբերման, ներկայի հետ աղերսներ գտնելու դիալեկտիկական ընթացք: Անցյալը մտաբերելիս Հակոբյանի մոտ ինքնավստահության զգացումը անթաքույց շեշտադրվում էր այն ունկնդրին փոխանցելու միտվածությամբ և ներկայացվում էր ներկայի հետ հակադրամիասնության մեջ: Նկատելի էր, որ անցյալը երբեք նրան չէր վանում: Սա ճիշտ ապրած, բարություն ու ջերմություն շռայլած, հանրության կողմից ընդունելի մարդու կենսակերպն էր, դեռ ավելին, անցյալը իր բոլոր վայրիվերումներով նրան ձգում էր, նա անցյալը պատշաճ գնահատելու կարողություն և հմտություն ուներ:

Հր. Հակոբյանն այն երևելիներից էր, ով գրեթե կես դար արժանապատվորեն կրում էր կրթության, գիտության, սոցիալական ոլորտին

[1]Նույն տեղում, էջ 55:

առնչվող մեծ պատասխանատվություն: Հուշերի գերակշիռ մասը առնչվում էր այդ ոլորտներին՝ դառնալով «ծանր բեռ», քանզի կրում էր սոցիալական արժևորման տարր:

Հակոբյանական հուշի առանձնահատկություններից մեկն այն էր, որ նրա բոլոր ունկնդիրների վկայությամբ՝ ուներ վստահության, հավաստիության ամենաբարձր վարկանիշը: Նա այնքան ճշգրիտ էր վերարտադրում անցյալի դեպքերը, դրանց մանրամասները, որ դրանք գրառելու դեպքում դառնում էին վավերագրականին հավասարազոր: Անառարկելի է, որ հուշերի հիմքում ընկած են կատարված դեպքերը, դրանց մասին վառ հիշողությունները: Այս առումով վկայակոչենք նախ ամենամտերիմներին: «Բացառիկ, պարզապես անսովոր ու ապշեցուցիչ է նրա հիշողությունը, իսկ հումորի մեծ զգացումը առավել գրավիչ և մտերմիկ է դարձնում նրան»[1], - խոստովանում է կինը՝ Թերեզա Օհանյանը: Դուստրը՝ Հրանուշ Հակոբյանը, պնդում է, ավելին՝ փաստարկում է. «Հորս հիշողությունն առասպելական է. գիրքը կարդում է, փակում և կարող է էջերով անգիր ասել»[2]: Թոռնուհին՝ Ռուզաննա Հակոբյանն էլ ընդգծում է նրա հետևյալ շնորհները՝ անուրանալի տաղանդը, բացառիկ հիշողությունը, իմաստնությունն ու խորաթափանցությունը, մարդկային ընդգծված հմայքն ու գրավչությունը, վառ անհատականությունը[3]: Ընդհանուր առմամբ թե՛ նրա մասին հուշագրության հեղինակները և թե՛ բոլոր ճանաչողները հիշատակել են Հրանտ Հակոբյանի բացառիկ հիշողության մասին: Ինքս էլ ականատես եմ եղել բազմաթիվ դեպքերի և ունկնդիր՝ տարբեր պատմությունների ու կարող եմ վկայել, որ Հրանտ Հակոբյանի հիշողությունը կբավականացներ բազմաթիվ մարդկանց: Դրանում համոզվեցի, երբ գրում էր «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գիրքը:

«Հրանտ Հակոբյանը հավերժի ճամփորդ» հուշապատման մեջ էականն այն է, որ ժամանակը պայմանավորում է գործողությունների ընթացքը, այն պատմության շարունակականությունն է, մի այլ բնորոշմամբ՝ մշակութային արժեքների պատմությունն է: Ժամանակի ամեն մի հատվածը այստեղ արժևորված է, ժամանակը պահ է՝ տրված դարերին: Հուշապատումն անցողականին, ժամանակավորին տևականություն է հաղորդում: Այն

[1]Տ՛ես Հրանտ Հակոբյանը հավերժի ճամփորդ, Երևան: Գիր, 2014, էջ 20:
[2]Նույն տեղում, էջ 25:
[3]Նույն տեղում, էջ 125:

Հակոբյանի հանդեպ երախտագիտության և հարգանքի տուրք է, յուրահատուկ հուշագրություն: Կան իրադարձություններ ու երևույթներ, որ պարտավոր ենք հիշել, անգամ իրավունք չունենք այն մոռանալու, առավել ևս՝ թաքցնելու: Հուշ-մոռացում փոխհարաբերությունների առումով Հակոբյանի ըմբռնումը համահունչ է Ֆ. Նիցշեի մոտեցմանը, որը «Բարոյականության ծագումնաբանություն» երկում մոռացումը համարում է մեղքի տեսակ, խղճի խայթ, իսկ այդ մեղքի քավումը համարում է բարոյական: Հիշողության պահապանումը պարտք է ու պատասխանատվություն:

Հակոբյանը ամենաբարեխիղճ պարտապանն էր անցյալի հանդեպ, նա կարծես հիշողության «ծանրություն» էր զգում: Հուշեր պատմելիս նա թեթևանում էր, վաստակած մարդու զգացողություն ունենում, դիմացինին հարստացածի բերկրանք էր պատճառում: Փոխանցումի այդ արվեստը ուղղակի գերում էր: Հատուցի՛ր անցյալիդ պարտքը, որը կարելի է բնորոշել որպես հիշողության փոխանցում, թեթևացրու՛ հիշողությանդ ծանր բեռը, առաջ ընթացի՛ր՝ մտածելով, որ թեթևացրած հուշը հարստացնում է, կրթում, գիտելիք փոխանցում մյուսներին՝ այդպես ապահովելով հիշողության շարունակականությունը: Անձին, երևույթը և նրա մասին հուշը մոռացության մատնելը Հակոբյանի համար անընդունելի էր, ասես վախենում էր մոռացումից: Հաղթահարելով մոռացումը՝ անցյալը կարծես վեր է հառնում: Նրա պատկերացմամբ՝ մոռացումը գրեթե համարժեք էր անհարգալից վերաբերմունքի և՛ անցյալի, և՛ ներկայի նկատմամբ: Հակոբյանի պարագայում գործեց «թույլ չես տա մոռանալ, քեզ էլ չեն մոռանա» կամ «մի՛ մոռացիր, որ չմոռացվես» սկզբունքը:

Միգուցե հուշի կարևորության վրա այսքան ուշադրություն չդարձնեինք, եթե ինքը՝ Հրանտ Հակոբյանը, այդ մասին ուղղակի նշած չլիներ «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գրքում, որի հենքում էլ հենց հուշի վերարտադրման և արդիականության համադրումն է, քանզի նա երբեք չի փորձել իրենից վանել, հեռացնել անցյալը և նրա դասերը: Հուշեր պատմելով և անցյալը յուրովի վերակենդանացնելով՝ նրա հիշողությունը դառնում էր առավել հզոր: Հակոբյանը վարպետորեն ներկայի տիրույթ էր վերադարձնում անցյալում թողած ժամանակը, ներկան ընդարձակում ու հարստացնում էր անցյալով, սրանով ունկնդիրն ավելի լավ էր ճանաչում պատմությունը, ներկան, աշխարհը, քանզի երևույթը, եղելությունները քննվում են ոչ թե մակերեսային, ոչ միայն տվյալ պահի

թելադրանքով, որը կարող է լինել պատեհապաշտություն, այլև անցյալի հետ համադրելով: Սա այն սկզբունքն էր, որին դավանում էր Հր. Հակոբյանը, և նա երբեք չշեղվեց այդ ուղուց: Նա անձին միշտ դիտարկել է իր ապրած ժամանակի համատեքստում՝ պահպանելով պատմական արդարության սկզբունքը: Այսպես, «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գրքի առաջաբանում Հրանտ Հակոբյանը ներկայացնում է այն իրողությունը, որ 1961թ. նախկին Նոր Բայազետ, ներկայումս՝ Գավառ քաղաքի դպրոցներից մեկի հիմնադրման 100-ամյա հոբելյանին պատշաճ նախապատրաստվելուն խանգարում էր համապատասխան արխիվային փաստաթղթերի բացակայությունը, ուստի այդ պակասը լրացնելու համար փորձում են հենվել տարեց մարդկանց հիշողության վրա: Հակոբյանն այդ մասին գրում է. «Ստիպված եղան դիմելու տարեց մարդկանց, որոնք ժամանակին սովորել էին հիշյալ դպրոցում: Նրանցից ոմանք արդեն կորցրել էին հիշողությունը, ոմանք պատմում էին հակասական, իրարամերժ դրվագներ»: Այնուհետև, հուշի հուզահոգեբանական ընկալման և արժեքային մոտեցման տեսանկյունից ելնելով՝ նշում է. ‹‹...ես ընթերցողին, հատկապես նոր սերնդին, առաջարկում եմ մտովի գնալ 1930-ական թվականները և ժամանակի դպրոցահասակ երեխաների աչքերով դիտարկել երևույթը››[1]: Համաշխարհային գրականության մեջ բազմաթիվ դեպքերի կարելի է հանդիպել հուշի՝ որպես ստեղծագործության համար առիթ ծառայելու, հենք ու պատճառ դառնալու մասին: Այս առումով Հակոբյանի՝ վերը նշված գրքի և Գյոթեի «Բանաստեղծություն և ճշմարտություն» գրքի միջև կան համանմանություն և աղերսներ՝ վերհուշի նկատմամբ ունեցած վերաբերմունքի և այն արժևորելու տեսանկյունից:

Գյոթեն հիշյալ աշխատության առաջաբանը սկսում է ծանոթներից մեկի՝ իրեն հասցեագրված նամակով. «...կարդալով դրանք՝ մենք հանդիպեցինք շատ ծանոթ և անծանոթ գործերի, ավելին, այդ հատորները մեր հիշողության մեջ վերակենդանացրին նույնիսկ այնպիսի բաներ, որոնք վաղուց մոռացված էին թվում»[2], և ապա շարունակում է. ‹‹...ներկա աշխատությունը ծնունդ է առել նման որոնումներից ու խորհրդածություններից, և ընթերցողը, միայն այս տեսանկյունից նայելով,

[1]Տե՛ս Հակոբյան Հր. Խ., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 9:
[2]Տե՛ս Գյոթե, Բանաստեղծություն և ճշմարտություն, Երևան, 1985, էջ 8:

կարող է ճիշտ դատողություններ անել դրա մասին, հասկանալ և յուրացնել այն»[1]: Գործընկերներն ու մտերիմները Հակոբյանին բազմիցս խնդրել են հուշերը գրի առնել: «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գործը մասամբ է այդ բացը լրացնում: Այս տեսանկյունից գրքում յուրահատուկ հնարանք է կիրառված. այստեղ հուշը ընթացքի մեջ է: Հակոբյանը հուշը ներկայացնելիս մի դեպքում անցած ժամանակը պեղող ու իմաստավորող է, մեկ այլ դեպքում՝ ժամանակի հոսքին զուգահեռ առաջ ընթացող: Թե՛ այս գործում և թե՛ նրա հուշերում ընդհանրապես սերունդները հերթագայում են. բնական, սովորական ընթացք, որը լսողին բավականություն է պատճառում: Նա վարպետորեն անցած-գնացածը բարձրացնում էր, հասցնում ընթացքի մեջ գտնվողին, և ամեն մեկը յուրովի մտածում է չվրիպելու, չսխալվելու և անիմաստ չապրելու մասին: Սա է հակոբյանական հուշի կենսափիլիսոփայությունը: Ամենասեղմ բնորոշմամբ՝ Հակոբյանի հիշողության դաշտը իր մեջ պարունակում էր գոյության իմաստի փնտրտուքը:

Հակոբյանի հիշողության դաշտը սովորականը և առօրեականը չէ, այն ունի ժամանակատարածքային մեկ այլ չափում, ուստի լինելով վերջին 20 տարիների նրա «լավագույն» ունկնդիրը և բազմաթիվ ունկնդիրների հոգեկան վիճակի ականատեսը՝ մեզ թույլ ենք տալիս օգտագործել «հիշողության դրախտային դաշտ» եզրույթը, հիշողության մի այնպիսի դաշտ, որում հայտնվելը շատերը կերազեին: Հակոբյանին առնչվելիս ինքնաբերաբար ձգտում էին հայտնվել այդ տարածքում, իսկ այնտեղ գտնվողներից ոչ ոք չէր ցանկանում «հեռանալ»:

Այստեղ մի շատ կարևոր հոգեբանական պահ կա. ե՞րբ, ինչու՞ և ինչպե՞ս հիշել. դա կարելի է համարել հիշողության արթնացում: Այս մասին մի փոքր պարզաբանում. 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին փիլիսոփայության մեջ ժամանակը և հիշողությունը լուրջ բանավեճի թեմա էին: Պրուստը իր գրական ստեղծագործությամբ ու «ակամա հիշողություն» սկզբունքային դրույթով կարևոր ներդրում ունեցավ այդ բանավեճում: Ելնելով դրանից՝ նկատենք, որ «ակամա հիշողությունը» Հրանտ Հակոբյանի մոտ արթնանում էր հանկարծահաս դիպվածով, որևէ դրվագով և օգնում էր վերագնահատելու անցած-գնացած ժամանակները: Նրա հսկայածավալ

[1]Նույն տեղում, էջ 11:

հուշադարանում շերտ առ շերտ ամբարված էր իր ապրած ողջ ժամանակաշրջանը, որը համակարգչային հիշողությանը համարժեք թղթապանակներից հանվում և մատուցվում էր ունկնդրին:

Վերհիշելիս Հակոբյանը ակամայից մտնում էր այն ժամանակվա դերի մեջ: Որպեսզի հուշը չթողնի անցողիկ ու ժամանակավրեպ տպավորություն, նա այն պատմում է ճիշտ տեղին ու ժամանակին, դեպքը ծնող ու սնող հանգամանքների մանրամասն նկարագրմամբ: Կային հատկապես «սեզոնային բնույթ» կրող հուշեր, որի պարագայում անցյալը ներկայացվում էր ի լրումն ներկայի: Օրինակ՝ ձմռան ամիսներին ամռանը տեղի ունեցած դեպքի մասին սովորաբար չէր հիշատակում և հակառակը: Նման պարագայում այն տպավորությունն էր ստեղծվում, որ Հակոբյանը երբեք չէր գնում հուշի հետևից, չէր փնտրում, ճիգ չէր գործադրում, այլ հուշն էր «փնտրում» և «գտնում» վերարտադրողին: Նա զրույցի պահը զգում էր: Նրա մոտ հուշը՝ որպես մշտարթուն ժամապահ, հսկում էր ներկային:

Հուշի անցյալ-ներկա փոխհարաբերությունն է իմաստավորում ժամանակի միավորի միասնության գաղափարը, որը ձևակերպել է դեռևս Օգոստինոս Երանելին միջնադարում: Չկա անցյալ, ներկա և ապագա, այլ կա անցյալի ներկա, ներկայի ներկա և ներկայի ապագա: Անցյալից ներկայի միջոցով դեպի ապագան ընթացքը առնչվում է հուշի իմացաբանական կողմի հետ, որը պետք է բավարարի ճշմարտության տեսության բոլոր սկզբունքները: Հրանտ Հակոբյանի հուշերում փիլիսոփայական այդ սկզբունքը, ճշմարտության օբյեկտիվության, կոնկրետության պահանջները, բացարձակ և հարաբերական բնույթը խստորեն պահպանված են ընդհուպ մինչև պրակտիկան՝ որպես իմացության հիմք ու ճշմարտության չափանիշ: Այսպես, 1999 թ. վերջերին և 2000 թ. սկզբներին, երբ Հրանտ Հակոբյանը նախաձեռնել էր համալսարանի ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքները, «ակամա հիշողության» սկզբունքներին համահունչ՝ անընդհատ հուշեր էր պատմում 1960-ական թվականների կեսերին ջեռուցման արդյունավետությունը ապահովելու ուղղությամբ իր ղեկավարած դպրոցի հնոցապանին ուղղված հետաքրքիր դիտողության մասին:

Հակոբյանը օրինապահ մարդ էր, աշխատանքն սկսում էր կա՛մ ճիշտ ժամանակին, կա՛մ ավելի շուտ: Նույնը չէինք ասի աշխատանքի ավարտի մասին, աշխատանքի վայրից տուն էր գնում բավականին ուշ, և ակամա այդ ժամանակը վերհուշի պատումի էր վերածվում: Պաշտոնական

աշխատաժամանակը ավարտելուց հետո հավաքվում էինք մեր ռեկտորի առանձնասենյակում, և գործնական, աշխատանքային քննարկումներն ակամա շաղկապվում էին անցյալի դեպքերն ու դիպվածները հիշելու հետ: Հիշողության տպավորությամբ հաջորդ օրը աշխատանքի էինք ներկայանում կարծես առավել հարստացած, առավել փորձառու դարձած: Հուշերի մասին խորհրդածությունները կցանկանայի ավարտել՝ հուշը համեմելով հուշով: 2004 թ. գարունն էր: Երևանաբնակ բարեկամս՝ նախկին նորբայազետցի, ով գրեթե Հակոբյանի հասակակիցն էր, այցելել էր Գավառ: Հոգեկան ծանր կացության մեջ էր, բնակարանի հետ կապված միջհարևանային վեճերում խճճվել էր, իր պատմելով՝ խաբեության ու խարդախության զոհ էր դարձել, մի խնդրանք ուներ, որ օգնեինք՝ հանդիպեր Հրանուշ Հակոբյանին, որն այդ ժամանակ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր էր: Առաջարկեցի նախ հանդիպել Հրանտ Հակոբյանի հետ, եթե հարկ լինի, ինքը դստերն այդ մասին կտեղեկացնի: Համաձայնեց: Լավ ճանաչելով ռեկտորիս՝ բարեկամիս զգուշացրի, որ Հակոբյանը նախ նրա տոհմածառից, աշխատանքից հարցեր կտա, հուշեր կպատմի: Չսխալվեցի: Օրվա վերջ էր, երկար էին զրուցել, հիշել էին հին ու բարի օրերը, անցած-գնացած դեպքերը: Այնուհետև Հակոբյանը ասել էր. ‹‹Ե՛կ, առայժմ Հրանուշին նեղություն չտանք››: Նրա ներկայությամբ զանգել էր իր հայրենակից, դատավոր Մհեր Խաչատրյանին՝ բարեկամիս ընդունելու և գործին ծանոթանալու խնդրանքով: Երկու շաբաթ հետո բարեկամս նորից եկավ խիստ հուզված և ոգևորված: Հիացմունքը թաքցնել չէր կարողանում. «Հրանտը այդ ինչ հրաշք, աստվածային մարդ է»: Այնպես էին ընդունել ու օբյեկտիվորեն, արդարացի հարցը լուծել, որ, իր ասելով, նման բան չէր էլ կարող ակնկալել: Աշխատանքային օրը վաղուց ավարտվել էր, մինչդեռ Հրանտ Հակոբյանի աշխատասենյակի լույսը դեռ վառվում էր, ժամանակը հետ էր գնացել առնվազն քառասուն տարով, իրողությունը այլ կերպ չէիր բնութագրի, քան լավություն արած մարդու և այն գնահատող մարդու հանդիպման բերկրանք, Հրանտ Հակոբյանի պարագայում՝ երանելի և շատ հաճախ կրկնվող իրավիճակ: Իսկ սեղմ բնութագիրը՝ հրաշալի օր հրաշք մարդու հետ: Սա բազում դեպքերից մեկն էր միայն, մինչդեռ քանիսի՞ն ենք ականատես եղել:

Հուշ պատմելիս Հր. Հակոբյանն առանձնահատուկ մոտեցում էր դրսևորում՝ օգտագործելով այն ժամանակվա տեղանունները, լավ գիտենալով, որ շատ հաճախ անվանափոխությունները հանգեցնում են անցյալի

մոռացությանը, հատկապես, եթե դա արվում էր միտումնավոր: Անցյալի հուշերը շատերի մոտ էապես փոխվում են, աղճատվում ժամանակի ընթացքում: Այս առումով հակոբյանական հուշը ուներ մի էական առանձնահատկություն: Հուշը միշտ ներկայանում էր այնպիսին, ինչպիսին եղել էր նախկինում, իրենց բուն տեսքով ու էությամբ՝ իրենց վրա չկրելով տարիների ձևախեղումները: Այստեղ է, որ կարելի է կիրառել «թանկ և արժեքավոր հուշ» արտահայտությունը: Ժամանակի ամեն մի հատվածը հուշերում արժևորված է: Ժամանակը և կատարած գործը պահ է՝ տրված սերունդներին ու դարերին:

Հակոբյանի համար հուշը սովորական, առօրեական երևույթների ոլորտից չէր, այն մի այլ արժեքային համակարգում էր և ինչ որ տեղ նմանվում էր վերհուշի մասին Պլատոնի մոտեցմանը. վերհուշը ընկալվում էր որպես գիտելիք: Անցյալի վերհիշումը ակտիվ, կառուցողական գործընթաց է, այլ ոչ թե տեղեկատվության ինքնանպատակ վերականգնում և պարզունակ փոխանցում: Հիշել, նշանակում է անցյալի մի մասը, կարևորագույն բաղադրիչը, տեղադրել ներկայի հայացքների համակարգում և այն նպատակաուղղել տվյալ ժամանակի կարիքների սպասարկմանը: Հր.Հակոբյանը դա անում էր ընդգծված վարպետությամբ, գիտնականի փորձառությամբ, փիլիսոփայի վերլուծական մտքով՝ ցույց տալով, որ հիշողությունը չի գտնվում սոցիալական վակուումի մեջ, այլ մեծապես կրում է սոցիալական միջավայրի ազդեցությունը և փոխադարձաբար ներգործում շրջապատի վրա: Հր. Հակոբյանի հուշերի հիմքում իր հարուստ կենսափորձն էր՝ զուգորդված սոցիալական միջավայրի պայմաններին, առկա իրողություններին: Իր հարուստ կենսափորձի շնորհիվ տարիների ընթացքում Հր.Հակոբյանին հաջողվել էր կիրառել և պահպանել դեռևս հին ժամանակներից ձևավորված հիշողության և վերարտադրման տեխնիկայի սկզբունքները, որ այն կոնկրետի և տեսանելիի արվեստ է, և նրա «կանոնները» պահանջում են բացարձակը որոշակիացնել, իսկ որոշակին, կոնկրետը կամ կոնկրետացվածը փոխադրել պատկերի և անհատականացնել: Սա իր հերթին պահանջում է հիշողության ազատություն, քանզի Հակոբյանը հուշեր պատմելիս իրեն զգում էր նույնքան ազատ և ինքնավստահ, որքան հիշվող դեպքերի, իրադարձությունների ընթացքում: Նա միշտ էլ ձերբազատված էր կաշկանդող հանգամանքներից, քանի որ պահպանում էր հուշի անաղարտության սկզբունքը, և անգամ հանգամանքի

բերումով նույն դեպքի մասին մեկից ավելի անգամ լսողը չէր նկատել հակասություն առաջին և շարունակաբար պատմածի միջև: Քանզի Հակոբյանի պարագայում հուշը անցած ժամանակների խամրած և երբեմն-երբեմն աղոտ արտացոլանքը չէր, այլ չխամրող ցոլանք, իրական կյանքի մշտական փայլատակում: Այդ փայլատակումը ծնվում էր կարոտի զգացումից: Նրա հուշերում միաձուլված էին ժամանակն ու անհատը, այդ միաձույլ կարոտի մեջ կար կարոտ իր ծնողների, ծննդավայրի, ընկերների, իր անցած-գնացած օրերի հանդեպ, հասուն տարիքի մարդկանց բնորոշ զգացում, որն ընկալվելու դեպքում ունկնդիրը հարգանքով է լցվում դիմացինի հանդեպ: Այստեղ Հր.Հակոբյանը անզուգական էր, ահա իր հանդեպ նրան ճանաչողների կողմից կարոտի զգացումը: Հուշը և՛ ծնում է, և՛ աստիճանաբար մեղմում կարոտի զգացումը, բայց ոչ երբեք մարում:

Շնորհիվ ինքնատիպ պատմելաձևի, լեզվի ճոխության, ներկայացվող դեպքերի ժամանակահատվածը լսողի երևակայության մեջ ասես համընկնում է ներկա ժամանակի հետ, ու վերջինս կարծես դառնում էր դեպքերի մասնակիցը, գործող անձ՝ «շահագրգռված» դեպքերի ընթացքով, դրա համար էլ Հր.Հակոբյանի զրույցն ունկնդրողները երբեք չէին ընդունում կրավորական կեցվածք: Հր. Հակոբյանը քանդում էր պատմության կծիկը, շոշափում մարդկային ճակատագրեր պատմական եղելությունների լույսի ներքո: Նա գնահատականներ էր տալիս ժամանակի սովորություններին ու բարքերին, քաղաքական ու տնտեսական գործիչներին, բայց երբեք չէր պիտակավորում, հուշերում ներառված թե՛ ապրող, թե՛ հեռացած անձանց նկատմամբ անհարգալից չէր արտահայտվում: Հուշեր պատմող անձի պարագայում «պայքար» է ընթանում ներկայի ու անցյալի միջև: Անցյալը ինքնապաշտպանության մղումով փորձում է զբաղեցնել, «գրավել» ներկայի տեղը: Հակոբյանը զերծ էր այդ միակողմանիությունից: Ներկա ժամանակում ծնված հուշը նոր որակ ու հատկանիշներ էր ձեռք բերում, այն չէր սահմանափակվում լոկ հուշ լինելով, որովհետև Հակոբյանն իր բնատուր տաղանդով կանգնեցնում էր ժամանակը և նրանից վերցնում այն ամենը, ինչը դեռ անհրաժեշտ է ներկա պահին: Նա համոզված էր, որ անցյալի փորձը ապագայում պետք է գալու:

Հր.Հակոբյանի հուշերի աշխարհը սովորական չէր, այն քառաչափ աշխարհ էր. ժամանակ-տարածություն-հոգեբանություն–ներհայեցողություն (ինտուիցիա):

Ինձ միշտ թվացել է, որ նա ապագան կռահելու մեծ ունակություն ուներ, որը ծառայեցնում էր հուշ-ապագա երկխոսությանը: Նա անցյալի խորքերը մտնելիս ու այն ներկա ժամանակները փոխադրելիս մի տեսակ փոխվում էր, երիտասարդանում: Հր. Հակոբյանը միշտ մեզ վրա թողնում էր վաստակած մարդու տպավորություն: Հոգեկան ծանր վիճակում գտնվող մարդու հետ զրուցելիս Հր. Հակոբյանը անմիջապես պատմում էր համանման որևէ դեպքի մասին և դրանով փորձում «բուժել», սպեղանի դնել զրուցակցի հոգուն, հուշի «բուժիչ» հատկությամբ դիմացինին սփոփել: Հուշը կարծես բուժում, դարմանում է կուտակված ցավն ու կսկիծը: Հր.Հակոբյանի մոտ գերակշռում էր հուշի այն տեսակը, որն ավելի շատ ոգեշնչող, ընդօրինակող, տրամադրող հատկություն ուներ: Նա իր կենսական էներգիան ունկնդիրներին հաղորդելու բնատուր ցանկություն և շնորհ ուներ՝ կենսադաշտի մասին իր յուրահատուկ ըմբռնումով հանդերձ:

Առաջին հայացքից «անփորձ» մարդու համար նրա հուշ-զրույցը թվում էր կենցաղային, մինչդեռ իրականում Հր. Հակոբյանը հուշեր պատմելու փորձին, եղածին հաղորդ էր դարձնում աճող սերնդին և դաստիարակում երիտասարդներին: Հր. Հակոբյանն ի վերուստ զրուցասեր մարդ էր: Շնորհիվ իր ֆենոմենալ հիշողության՝ ստեղծում էր հիշողության անչափ լայն դաշտ, ձևավորում հսկայական տարածք՝ լեցուն անձերով ու իրադարձություններով: Պատիվ էր Հր.Հակոբյանի հետ զրույցի բռնվելը, և անկեղծ ասած՝ նա շատ-շատերին էր այդ պատվին արժանացնում, բայց վարվում էր փիլիսոփայորեն, ընտրողաբար՝ ելնելով զրուցակցի նախասիրություններից, ցանկություններից, տրամադրությունից: Բոլոր նրանց, ում առաջին անգամ հուշ էր պատմում, վարպետորեն ներքաշում էր իր հիշողության դաշտը, և նրա հետ շփվողները հայտնվում էին նրա հիշողության տարածք՝ այնտեղից երբեք դուրս չգալու ցանկությամբ: Նրա զրուցակիցը արդեն իսկ դառնում էր իր մտերիմը, բարեկամը: Հակոբյանի զրույցը լսվում էր, ապա կրկին լսելու ցանկություն էր առաջանում, քանզի որպես հիշող «ես»՝ նա մեկ օրվա ընթացքում հիշում էր առանձին-առանձին դեպքեր կամ էլ իրադարձությունների մի ամբողջ շարան և կարծես ժամանակը հետ էր բերում ու իրականությունը արթնացնում էր՝ իր պատմական առանձնահատկություններով հանդերձ: Նա անցյալը, որը ակամա հիշողությամբ կամ վերհուշի միջոցով հետ էր բերել, չէր կտրում ներկա ժամանակից, զրուցակցին թվում էր, որ նա ‹‹ապրում›› է այդ ժամանակի մեջ մե՛րթ ոգևորվելով, մե՛րթ խորհելով ու թախծելով, մե՛րթ

վրդովվելով, այնպես որ դիմացինին թվում էր, որ ինքն էլ է հայտնվել այդ միջավայրում: Իրադրությունը դառնում էր գիտակցության մեջ հաջորդական հոսք: Ժամանակի հեռավորությունը ամենևին չէր խանգարում Հր. Հակոբյանին նույն ապրումներն ու զգացումները տեղափոխել ներկա ժամանակները:

Ստացվում էր դեպքերի ու այնտեղ գործող անձանց մի այնպիսի մեկնաբանություն, որ ունկնդրողը չէր զգում ժամանակի հեռավորությունը, ստացվում էր հուշերում արթնացած, նախկինում տեղի ունեցած դեպքերի և անձանց մշտական ներկայություն: Նման մեկնաբանման պարագայում Հր. Հակոբյանին ունկնդրողի մտքով անգամ չէր անցնում կորուսյալ ժամանակի մասին: Նա կապում էր անցյալն ու ներկան: Անընդհատության դեպքում գործ ենք ունենում ժամանակի տևողության հետ՝ իբրև հոսք: Ներկա պահը առանց հիշողության ‹‹վայրկենականություն›› է, որի պարագայում չի ընկալվում հոսքը: Հր. Հակոբյանի մոտ սա փիլիսոփայական մեթոդի հստակ, գործնական կիրառում էր՝ ժամանակի, տարածության, շարժման միասնականությունը հաստատելու համար: Ժամանակը ենթադրում է շարժում, շարժումը՝ մարդկային հասարակության մեջ գործունեություն: Ժամանակի մեջ Հր.Հակոբյանի հուշերում միշտ շեշտադրվում էին գործող, նորը ստեղծող, արարող մարդիկ, թերևս չէր շրջանցում վերջիններիս ճանապարհին հանդիպող խոչընդոտները:

Խորիմաստ մի շերտ ևս թաքնված է ժամանակի՝ հուշի միջոցով իբրև տևողություն ներկայացնելու հետ, քանզի ժամանակի ընթացքում յուրաքանչյուրն ունի իր առաքելությունը: Հր. Հակոբյանը կյանքի փորձով համոզվել էր, որ նա, ով դադարում է իր առաքելությունը գիտակցելուց, գոյություն ունենալը դառնում է տաղտկալի, գործելը՝ դժվար, կյանքը՝ անիմաստ: Հր. Հակոբյանը նկատել էր, որ եթե հարատևման զգացումը չլիներ, ապա տևողության փոխարեն գոյություն կունենար միայն «վայրկենականությունը»: Նա հուշերի միջոցով «վայրկենականությունը» հնարավորինս տեղափոխում էր հարատևություն, ասել է՝ հավերժության ոլորտը, քանի որ տարիներին զուգահեռ ավելի ու ավելի ծավալուն էր դառնում իր հետևից եկող անցյալի «բեռը»: Եվ ինչպես Պարույր Սևակն է նշում, երբ դատարկ է անցյալդ, ինչ իմանաս հուշն ինչ է: Ժամանակի ընթացքն անցյալից ներկայի միջոցով դեպի ապագան այնպես էր ագուցված Հր. Հակոբյանի հուշում, որ սևակյան գեղարվեստը միավորվում էր էյնշտեյնյան

գիտականությանը: Գոյության հավերժությունը պատկերացնում եմ հետևյալ բանաձևով՝ ժամանակ+տարածություն+շարժում=›հավերժություն: Հակառակ գործողություն՝ √2 հավերժությունից=հուշ: Հուշ+վերհուշ+գործ=Հավերժի ճամփորդ:

Հուշեր պատմողը պետք է ուշադիր լինի շրջապատի հանդեպ, տեսնի ու պատմի արժեքավորը, էականը, մնայունը, դիպուկը՝ խուսափելով անցողիկից ու ժամանակավրեպից: Հր. Հակոբյանը հիշողությամբ պատմությունը սկսում էր, որքան հնարավոր է, հեռվից: Նա անկաշկանդ էր, սոցիալական միջավայրը երբեք չէր սահմանափակել նրա հիշողության ծավալն ու խորությունը: Թեև Հակոբյանը ապրել է հիմնականում մի հասարակարգում, որտեղ իշխանությունները իրենց ընդունած որոշումներով ու վարած քաղաքականությամբ սահմանափակում էին անցյալի մտավոր ըմբռնման շրջանակները, դնում պայմանական սահմաններ, որոնցից այն կողմ անցյալի իրադարձությունները համարվում էին ոչ տեղին ու ոչ ցանկալի, որն էլ տեղիք էր տալիս մոռացության, իսկ կյանքը ցույց է տալիս, որ հենց այդպիսի իրադարձություններն ու անձինք են հետաքրքրություն ներկայացնում պատմողի ու նրան ունկնդրողի համար: Հր.Հակոբյանը զերծ մնաց այդ սահմանափակություններից: Նա վերհիշում էր խորիմաստ և ուսուցանող դեպքեր, պատմական իրադարձություններ, որոնց մեծ մասը ներկայացնում էր իր ուսուցիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Արամայիս Կարապետյանի շուրջն ստեղծված մթնոլորտի առնչությամբ: Բոլոր պատեհ առիթներով նա հուշեր էր պատմում Կարապետյանի մասին ընդգծված հարգանքով այն դեպքերում, երբ զրուցակցին որոշակի փիլիսոփայական գիտելիքներ հաղորդելու մտադրություն ուներ: Ի դեպ, Հր.Հակոբյանը հաճախակի էր հուշը տեղափոխում մասնագիտական հասկացությունների ոլորտ՝ ունկնդրի մոտ փիլիսոփայական գիտելիքի պակասը լրացնելու հստակ միտումով: Այս դեպքում էլ հուշեր էր պատմում իր գործընկերներ, նշանավոր և ճանաչված փիլիսոփաներ Հենրի Գաբրիելյանի, Գևորգ Բրուտյանի, Հրաչիկ Շաքարյանի, Թորգոմ Իսայանի և այլոց մասին: Հր. Հակոբյանի հուշերը հիշյալ անձնավորությունների մասին լսելիս, ովքեր ինձ դասավանդել էին, ստանում էի ուսանողական տարիների՝ ինձ մտահոգող շատ հարցերիս պատասխանները:

Հրանտ Հակոբյանը ազդեցիկ մարդ էր, ով տարբերվում էր շրջապատի մարդկանցից իր մտավոր բարձր ունակություններով և ֆիզիկական

տվյալներով, կեցվածքով և մարդկային որակներով: Շրջապատի ուշադրության կենտրոնում լինելու համար նա ճիգ չէր գործադրում, դա ինքնաբերաբար ստացվում էր, ասել է՝ տարածք լցնող անձնավորություն էր, ինչ շրջապատում էլ հայտնվում էր, առանցքը, կենտրոնն էր դառնում ինքնաբերաբար, իսկ իր հուշերով ճեղքում էր լռությունը տարածության ու ժամանակի մեջ՝ ոգեղենացնելով այն: Չնայած իր բացակայության՝ նա միշտ մեզ հետ է, իր աշակերտների հետ, և մենք էլ փորձեցինք իր ծննդյան 90-ամյակի առթիվ ներկայացնել ու հարգել հակոբյանական ինքնատիպ հուշը:

Բանալի բառեր՝ *հակոբյանական հուշ, արտակարգ հիշողություն, հիշողության մեխանիզմ, արժեք, արժևորում, հավերժի ճամփորդ, սոցիալական փորձի փոխանցում:*

SIGNIFICANCE OF MEMORY AND THE MEMOIR OF "HRANT HAKOBYAN - ETERNAL TRAVELER"

H. G. GHAJOYAN
Candidiate of Philosophical Sciences
Dean of the Faculty of the Humanities of Gavar State University
Lecturer

The significance of memory is discussed in the article and, in the evaluation of memory, great attention is given to Hrant Hakobyan's philosophical views as a means of realization of informative, cognitive, educational functions, and in this context the book "Grant Hakobyan - eternal traveler" is analyzed.

Hrant Hakobyan was a Doctor of Philosophy, Professor, Head of the Department of History and Theory of Religion at YSU, Founder-Rector of Gavar State University. He was a broad-minded scientist and pedagogue, who possessed an exceptional memory, high human qualities, undeniable intellectual abilities, and a special talent to share memories. Through memories, he was able to connect historical events, to represent social values in the space and time domain of the past, present and future.

By the example of Hrant Hakobyan's life the cognitive meaning of memory is highlighted, which increases and is overestimated over time. By means of memory the important events, worthy individuals and deeds are saved from oblivion, becoming a unique way of moral, national, patriotic upbringing of the younger generation.

ВАЖНОСТЬ ВОСПОМИНАНИЙ И МЕМУАРЫ “ГРАНТ АКОБЯН - ПУТНИК ВЕЧНОСТИ”

Г. Г. КАДЖОЯН
Кандитат философских наук,
декан факультета гуманитарных наук,
преподаватель Гаварского государственного университета

В статье рассматривается значение воспоминания, уделяется большое внимание философским позициям Гранта Акобяна в оценке воспоминаний, как средства реализации информационных, познавательных, образовательных и воспитательных функций, и в этом контексте анализируется книга “Грант Акобян - путник вечности”.

Грант Акобян был доктором философских наук, профессором, заведующим кафедрой истории и теории религии ЕГУ, ректором-основателем Гаварского государственного университета. Широко мыслящий ученый и педагог он обладал исключительной памятью, высокими человеческими качествами, неоспоримыми интеллектуальными способностями и уникальным талантом делиться воспоминаниями. Посредством воспоминаний ему удавалось связать исторические события, представлять социальные ценности в пространственно-временном отрезке прошлого, настоящего и будущего. Примером жизни Гранта Акобяна подчеркивается познавательное значение воспоминания, которое со временем увеличивается и переоценивается.

Воспоминания спасают от забытья самые важные события истории, достойные лица и поступки, становясь своеобразным средством нравственного, этического, патриотического воспитания молодого поколения.